

CONCOURS D'ENTREE pour 2019-2020 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՑԹ

Bases de droit

22/06/2019

Temps imparti / ժամանակը: 2 heures/2 ժամ

Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարաններն արգելվում են :

1. Սահմանադրության ողջ իմաստն է.

ա/ պետության, քաղաքացիական հասարակության և մարդու ազատությունների միջև հավասարակշռության հաստատումը

բ/ պետության, անհատների և եկեղեցու միջև հավասարակշռվածության հաստատումը

գ/ անհատների, եկեղեցու, պետության միջև հավասարակշռվածության ապահովումը

դ/ սոցիալական տարբեր խմբերի միջև հավասարակշռվածության հաստատումն է

2. Արդի պետության կառույցակարգի սկզբունքներից չէ.

ա/ իշխանությունների բաժանումը

բ/ հրապարակայնությունն ու թափանցիկությունը

գ/ արհեստավարժությունը

դ/ օրինակելիությունը

3. Ազգային ժողովի ընդունած օրենքն ուժի մեջ չի մտնում.

ա/ քանի դեռ նախագահը չի ստորագրել և հրապարակել այն

բ/ քանի դեռ նախագահը դիտողություններ չի արել

գ/ քանի դեռ նախագահը առաջարկություններ չի արել

դ/ քանի դեռ օրենքին հավանություն չի տվել ընտրողը

4. Հայաստանի հանրապետության սահմանադրությունն ընդունվել է.

ա/ 1991թ.

բ/ 1993թ.

գ/ 1995թ.

դ/ 1996թ.

5. Ընդհանուր իրավասության դատարանների համակարգի օղակ չէ.

ա/առաջին ատյանի դատարանը
բ/վերաքննիչ դատարանը
գ/վճռաբեկ դատարանը
դ/սահմանադրական դատարանը

6. Քրեական գործի դատական քննության հետևանքով կայացրած որոշումը կոչվում է .

ա/վճիռ
բ/դատավճիռ
գ/դատական ակտ
դ/դատական եզրակացություն

7. Դատարանում գործի քննությունը.

ա/գաղտնի է
բ/մրցակցային է
գ/փաստաթղթային է
դ/այլընտրանքային է

8. Դատախազությունը դատարանում պաշտպանում է.

ա/հանցանքը
բ/զանցանքը
գ/մեղադրանքը
դ/մեղադրյալին

9. Քաղաքացիական իրավունքը կարգավորում է.

ա/ ոչ գույքային և ոչ անձնական հարաբերությունները
բ/ գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները
գ/ իշխանության և ստորադաս մեթոդով կառուցված գույքային հարաբերությունները
դ/ քաղաքացիների և իշխանությունների հարաբերությունները

10. Գործարքները.

ա/կամային,գիտակցված,նպատակամղված գործողություններ են
բ/ինքնանպատակ գործողություններ են
գ/խմբային գործողություններ են
դ/ճիշտ պատասխանը բացակայում է

11. Ենթաօրենսդրական իրավական ակտերի ենթահամակարգում գործում է

ա/հակասականության սկզբունքը
բ/անհակասականության սկզբունքը
գ/հավասարության սկզբունքը
դ/անհավասարության սկզբունքը

12. Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության կառուցակարգերը և կազմակերպությունները լինում են.

ա/համաշխարհային և բնակավայրային
բ/տարածքաշրջանային և տեղամասային
գ/համաշխարհային և տեղամասային
դ/համաշխարհային և տարածքաշրջանային

13. Մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունք չէ.

ա/մարդու իրավունքները հիմնված են հավասարության վրա
բ/մարդու իրավունքների իրականացումը խախտում է այլոց իրավունքները
գ/մարդու իրավունքները համընդհանուր են
դ/մարդու իրավունքները բարձրագույն արժեք են

14. Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին համաձայնագիրն ընդունվել է.

ա/1950թ.
բ/1959թ.
գ/1960թ.
դ/1969թ.

15. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանային համաձայնագիրն ընդունվել է.

ա/1991թ.
բ/1995թ.
գ/1999թ.
դ/1996թ.

16. Մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմումը ներկայացնելը անհրաժեշտ է.

ա/նախապես դիմել տվյալ երկրի արդարադատության նախարարություն
բ/նախապես դիմել Արդարադատության նախարարություն
գ/նախապես սպառել ներքին պաշտպանության միջոցները տվյալ պետությունում
դ/չպահպանել վաղեմության ժամկետը

17. Կտակը, դա.

ա/ քաղաքացու գրավոր ցանկությունն է՝ արտահայտված իր կենդանության օրոք՝ իր մահից հետո իր գույքը տնօրինելու վերաբերյալ
բ/քաղաքացու բանավոր ցանկությունն է՝ արտահայտված իր կենդանության օրոք՝ իր մահից հետո իր գույքը տնօրինելու վերաբերյալ
գ/քաղաքացու բանավոր ցանկությունն է՝ արտահայտված իր մահից հետո՝ իր գույքը տնօրինելու վերաբերյալ
դ/քաղաքացու գրավոր ցանկությունն է՝ արտահայտված իր մահից հետո՝ իր գույքը տնօրինելու վերաբերյալ

18. Քաղաքականությունը գործողություն է՝

ա/ ուղղված հասարակական կյանքի կառավարմանը և կարգավորմանը

բ/ ուղղված քաղաքական կյանքի կառավարմանը և կարգավորմանը

գ/ ուղղված հասարակաքաղաքական կյանքի կարգավորմանը և կառավարմանը

դ/ ուղղված կուսակցությունների կառավարմանը և կարգավորմանը

19. Պետական կառուցակարգի սկզբունքներն են.

ա/ մարդու իրավունքների գերակայությունը և ժողովրդաիշխանությունը

բ/ իշխանությունների բաժանումը և օրինականությունը

գ/ հրապարակայնությունը ,արհեստավարժությունը և թափանցիկությունը

դ/ բոլոր վերը նշվածները

20. Մեղքի ձևերն են.

ա/ դիտողությունը և անտարբերությունը

բ/ ինքնավստահությունը և անզգուշությունը

գ/ ինքնավստահությունը և դիտավորությունը

դ/ դիտավորությունը և անզգուշությունը

21. Դատախազությունը.

ա/ մասնակցում է հիմնականում քաղաքացիական դատավարությանը

բ/ ղեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից

գ/ գործադիր իշխանության վարչություն է

դ/ մասնակցում է հիմնականում քրեական դատավարությանը

22. Ցուցմունք տալու պարտականություններից ազատ են.

ա/ ամուսինները

բ/ ընկերները

գ/ հարևանները

դ/ ոչ ոք այդ պարտականությունից ազատ չէ

23. Քաղաքական կուսակցությունը.

ա/ ընդհանուր նպատակներով ու շահերով միավորված մարդկանց որոշակի խումբ է

բ/ ծրագրերով կապված մարդկանց խումբ է

գ/ կանոնադրություն ունեցող մարդկանց խումբ է

դ/ խնդիրներ ու գաղափարներ ունեցող մարդկանց խումբ է

24. Ըստ իրենց կողմից իրականացվող խնդիրների պետական մարմինները լինում են.

ա/ կոլեգիալ և միանձյա

բ/ օրենսդիր, գործադիր, դատական

գ/ կոլեգիալ, միանձյա, դատական

դ/ ճիշտ պատասխանը բացակայում է

25. Կոլեկտիվ աշխատանքային վեճերի քննարկման պարտադիր փուլ է.

ա/ դատարանը

բ/ գործադուլը

գ/ արհմիությունում վեճի քննարկումը

դ/ հաշտեցման հանձնաժողովում քննարկումը

26. Աշխատանքային պայմանագրի փոփոխման մասին գործատուն պարտավոր է աշխատողին տեղյակ պահել.

ա/ մեկ ամիս առաջ

բ/ տասն օր առաջ

գ/ ոչ ուշ, քան 2 ամիս առաջ

դ/ ոչ ուշ, քան 3 ամիս առաջ

27. Միջազգային իրավունքի նորմերը ստեղծվում են.

ա/ պետությունների կողմից

բ/ միջազգային իրավաբանների պալատի կողմից

գ/ ՄԱԿ-ի իրավաբանական հանձնաժողովի կողմից

դ/ ԱՄՆ-ի գերագույն դատարանի կողմից

28. Միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական աղբյուրն են.

ա/ Հասցայի 4 համաձայնագրերը

բ/ Ժնևի 4 համաձայնագրերը

գ/ Ստրասբուրգի լրացուցիչ համաձայնագրերը

դ/ Միջազգային մարդասիրական պայմանագրերը

29. „Հասարակական դաշինք», ստեղծագործության հեղինակն է.

ա/ Անրի Դյունանը

բ/ Ժան-ժակ Ռուսոն

գ/ Յուլիոս Լիպսը

դ/ Թոմաս Հոբսը

30. Քաղաքացիական հասարակությունը.

ա/ ազատ անհատների միավորում է

բ/ ազատ ձեռներեցների միավորում է

գ/ ազատության ձգտողների միավորում է

դ/ այդպիսի հասարակություն չկա

31. „Պետական կառավարման մասին տրակտատի,,հեղինակն է.

ա/Մխիթար Գոշը

բ/Բարեկունի թագավոր Համուրայիին

գ/Ջոն Լոկը

դ/Կառլ Մարքսը

32. Մարդու երրորդ սերնդի իրավունքներն են

ա/հասարակական, տնտեսական և մշակույթայինը

բ/քաղաքացիականը և քաղաքականը

գ/համերաշխությանը

դ/ճիշտ պատասխանը բացակայում է

33. Մարդուն ազատությունից զրկել կարող են.

ա/միայն ընտանեկան խորհրդի որոշմամբ

բ/միայն օրենքով նախատեսված դեպքերում

գ/միայն միջազգային իրավապահ մարմինները

դ/ոչ ոք չի կարող դա անել

34. Ընդհանուր իրավասության դատարանների համակարգն իր հերթին բաժանվում է.

ա/ երկու օղակի

բ/ երեք օղակի

գ/ հինգ օղակի

դ/ այն օղակների չի բաժանվում

35. Դատախազության սահմանադրական լիազորություն չէ.

ա/դատախազությունը հարուցում է քրեական հետապնդում

բ/դատախազությունը դատարանում պաշտպանում է մեղադրանքը

գ/դատախազությունը բողոքարկում է դատարանի

վճիռները, դատավճիռները, որոշումները

դ/դատախազությունը հայց է հարուցում պատիժների, հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ

36. Ո՞րը „ֆիզիկական անձ..հասկացության մեջ չի մտնում.

ա/քաղաքացի

բ/օտարերկրացի

գ/քաղաքացիություն չունեցող

դ/իրավաբանական անձ

37. Անվավեր գործարքը չի առաջացնում .

ա/իրավաբարոյական հետևանքներ

բ/բարոյահոգեբանական հետևանքներ

գ/հոգեբանաիրավական հետևանքներ

դ/իրավական հետևանքներ

38. ՀՀ-ում դատավորը պաշտոնավարում է.

ա/մինչև յոթանասուն տարին լրանալը
բ/մինչև վաթսունհինգ տարին լրանալը
գ/մինչև վաթսուն տարին լրանալը
դ/անժամկետ

39. ՀՀ փաստաբանների պալատն ունի.

ա/քաղաքական պաշտպանի գրասենյակ
բ/հանրային պաշտպանի գրասենյակ
գ/հասարակա-քաղաքական պաշտպանի գրասենյակ
դ/ճիշտ պատասխանը բացակայում է

40. Մահմանադրական դատարանը ՀՀ նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն է տալիս.

ա/կառավարության դիմումով
բ/Ազգային ժողովի դիմումով
գ/Ազգային ժողովի իրավական հանձնաժողովի դիմումով
դ/վճռաբեկ դատարանի դիմումով

41. Մահմանադրական դատարանը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին եզրակացություն է տալիս.

ա/կառավարության դիմումով
բ/Ազգային ժողովի դիմումով
գ/վճռաբեկ դատարանի դիմումով
դ/Ազգային ժողովի իրավական հանձնաժողովի դիմումով

42. Պարտատիրոջ իրավունքը.

ա/պարտքի իրավունքն է
բ/պահանջի իրավունքն է
գ/իրավունք է
դ/ճիշտ պատասխանը բացակայում է

43. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի սկզբունք չէ.

ա/ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը
բ/մարդու իրավունքների հարգման սկզբունքը
գ/սահմանների անխախտելիության սկզբունքը
դ/պետությունների ներքին գործերին միջամտելու սկզբունքը

44. Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի սկզբունք չէ.

ա/իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը
բ/սահմանների անխախտելիության սկզբունքը
գ/ինքնիշխան հավասարության սկզբունքը
դ/ինքնիշխան հնարավորության սկզբունքը

45. Դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի հատուցումը կատարում է.

ա/դատարանը

բ/դատախազությունը

գ/պետությունը

դ/հատուցում չի տրվում

46. Հետաքննության և նախաքննության մարմինների ապօրինի գործողություններով պատճառված վնասի հատուցումը կատարում է.

ա/պետությունը

բ/հետաքննության մարմինը

գ/նախաքննության մարմինը

դ/դատարանը

47. Անձը, ով խախտել է պարտավորությունը, կրում է.

ա/քրեական պատասխանատվություն

բ/քաղաքացիական պատասխանատվություն

գ/կարգապահական պատասխանատվություն

դ/կազմակերպական պատասխանատվություն

48. Պետության կառույցակարգի կազմակերպման պատմականորեն առաջին եղանակն է.

ա/իշխանության կենտրոնացման սկզբունքը

բ/իշխանության ապակենտրոնացման սկզբունքը

գ/իշխանությունների տարանջատման սկզբունքը

դ/նման սկզբունք չկա

49. Վճռաբեկ դատարանն ունի.

ա/մեկ պալատ

բ/երկու պալատ

գ/երեք պալատ

դ/այն պալատների չի բաժանվում

50. Կրուն իրավունքը.

ա/քաղաքացու ընտրելու իրավունքն է

բ/քաղաքացու ընտրվելու իրավունքն է

գ/քաղաքացու մասնակցության իրավունքն է

դ/քաղաքացու ժողովրդավարության իրավունքն է

51. Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերով ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը օրինական ուժի մեջ է մտնում.

ա/հրապարակման պահից մեկ ամիս հետո
բ/հրապարակման պահից տասնհինգ օր հետո
գ/հրապարակման պահից տասը օր հետո
դ/հրապարակման պահից

52. Ենթաօրենսդրական ակտերը որպես կանոն.

ա/գործադիր իշխանության տարբեր մարմինների ակտեր են
բ/տեղական ինքնակառավարման մարմինների ակտեր են
գ/հրամաններ, հրամանագրեր են
դ/ճիշտ են բոլոր պատասխանները

53. Վարչական դատարանը քննում և լուծում է օրենքով նախատեսված բոլոր վարչական գործերը

ա/առաջին ատյանի դատարանի կարգով
բ/վերաքնիչ դատարանի կարգով
գ/վճռաբեկ դատարանի կարգով
դ/ճիշտ պատասխանը բացակայում է

54. Եթե վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանվել է Վճռաբեկ դատարանում, ապա այդ գործը (նոր քննություն) վարչական դատարանում քննվում է.

ա/կոլեգիալ երեք դատավորի կազմով
բ/կոլեգիալ հինգ դատավորի կազմով
գ/մեկ դատավորի կազմով
դ/ճիշտ պատասխանը բացակայում է

55. Կասկածյալը և մեղադրյալը ունեն պաշտպանության իրավունք: Այն ամրագրված է.

ա/Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային համաձայնագրում
բ/Եվրոպական սոցիալական խարտիայում
գ/Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական համաձայնագրում
դ/ՄԱԿ-ի կանոնադրությունում

56. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հիմնադրվել է.

ա/եվրոպական սոցիալական խարտիայի հիման վրա
բ/ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային համաձայնագրի հիման վրա
գ/մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հիման վրա
դ/մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի հիման վրա

57. Արդի հանրապետության տեսակ չէ.

ա/խորհրդարանականը
բ/նախագահականը
գ/սոցիալիստականը
դ/ժողովրդագրականը

58. Դաշնային պետություններում միասնական չէ.

ա/մաքսային համակարգը
բ/հարկային համակարգը
գ/ֆինանսական համակարգը
դ/կրթական համակարգը

59. Ոչ իրավական օրենքների դեմ պայքարի երաշխիք չէ.

ա/ժողովրդաիշխանության սկզբունքը
բ/սահմանադրական և ընդհանուր դատական վերահսկողությունը
գ/իշխանությունների բաժանման սկզբունքը
դ/գործադիր իշխանության օրենքականության սկզբունքը

60. Պետական մեղադրողը.

ա/դատավորն է
բ/դատախազն է
գ/ատենակալն է
դ/դատարանն է